Հայկական ԽՍՀ Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատ
Ջիաբուծական Վարչություն

ՀՐԱՀԱՆԳ

ՁՈՐԵԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԵՇԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՁՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

31 JAN 2018

Հայկական ԽՍՀ Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի
Ջիրաբուծական Վարչություն

636.04:636.1

ՀՐԱՀԱՆԳ

ՋՈՐԵԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԵՇԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՋՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1937

НКЗ АРМ. ССР

Коневодческое управление

ИНСТРУКЦИЯ

по проведению случной кампании в мулопроизводстве и ословодстве

11-28577 գր

Госиздат, Ереван, 1937 г.

Հաստատում եմ ԽՍՀ Միության
Հողժողկոմի տեղակալ՝
ՄՈՒՐԱԼՈՎ
26-ն մարտի 1936 թ.

ՀՐԱՀԱՆԳ

ՁՈՐԵԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԵՇԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձորեարտադրության և եշաբուծության զուգավորման կամպանիայի անցկացման դրվածքը ռացիոնալ կազմակերպելու համար ԽՍՀ Միության Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատն առաջարկում է ղեկավարվել հետևյալով.

1. ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Նախքան զուգավորման կամպանիան սկսելը յուրաքանչյուր տնտեսությունում կատարել հետևյալ նախապատրաստական աշխատանքը.

ա) զուգավորման կամպանիան սկսելուց վոչ ուշ քան 30 որ առաջ կատարել բոլոր մայրերի, արտադրող եշերի, փորձաեշերի անհանաբուժական զննումը.

բ) զուգավորման կամպանիան սկսելուց յերկու ամիս առաջ բոլոր արտադրող եշերին կերակրել լրացուցիչ խտացրած կերերով.

գ) բոլոր մայրերի կերակրումը կազմակերպել այնպես, վոր զուգավորման կամպանիայի սկզբին նրանք լինեն լավ բուծած.

դ) զուգավորման կամպանիայի համար առանձնաց-

նել անհրաժեշտ քանակությամբ կոպիտ և խտացրած կերերը.

ե) զուգավորման կամպանիան սկսելուց 15 որ առաջ կազմել զուգավորման կամպանիայի պլանը, կատարել մայրերի ընտրություն և նրանց կցել արտադրող եղերին։

2. Զուգավորման կամպանիայի պլանը նախորդը մշակել արտադրական խորհրդակցությունում։ Ջորեարտադրության համար առանձնացրած զամբիկները կցվում են արտադրական բրիգադներին, իսկ բրիգադների ներսում՝ առանձին կոլխոզնիկներին (ձիապաններին)։ Զուգավորման կամպանիայի պլանը պետք է հասցնել կոլտնտեսականին, որին անմիջականորեն հանձնարարվում է ջորի արտադրող զամբիկի խնամքը։

2. ՋՈՐԻ ԱՐՏԱԴՐՈՂ ԶԱՄԲԻԿՆԵՐԻ (ՋՈՐԵՄԱՅՐԵՐԻ) ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

3. Ջորիներ արտադրելը նոր գործ է. այդ կապակցությամբ տնտեսության ղեկավարներից, զոոանասնաբուժական պերսոնալից և ջորեարտադրությանն անմիջականորեն սպասարկող աշխատողներից՝ բրիգադավարներից և ձիապահներից պահանջվում է ցուցաբերել բացառիկ ուշադիր և հոգատար վերաբերմունք դեպի նրանց վրա դրված պարտականությունների կատարումը, հատկապես զուգավորման կամպանիան անցկացնելու ժամանակաշրջանում։

4. Ջորեարտադրող բոլոր տնտեսությունները պետք է զբաղվեն հետևյալ յերեք ուղղություններից վորևվե մեկ տիպի ջորեարտադրությունով.

ա) ծանր փոխակրանքային (տրանսպորտային) և հրետանային ջորիներ,

բ) գյուղատնտեսական աշխատանքների և ռազմական զումակի (աբոզի) համար լծկան ջորիներ,

գ) լեռնաբեռնակրային ջորիներ (լեռնային շրջանների և լեռնահրաձգային մասերի փոխակրանքային աշխատանքների համար)։

5. Փոխակրանքային ջորիներ արտադրելու համար պետք է ոգտագործվեն ծանրաքաշ ցեղերի մետիս զամբիկները (բրաբանսոնի, արդենի, պերշերոնի, կլեյդեսդալի)։

Ջորեարտադրող զամբիկները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին. նրանք պետք է ունենան յերկար և խոր իրան, համեմատաբար կարճ վոտքերով, յերկար և լավ զարգացած գավակ, կարճ ականջ և վոտքերի ուղիղ դրվածք. ցանկալի է, վոր մեղավի բարձրությունը լինի վոչ պակաս քան 160 սանտիմետր։

Փոխակրանքային ջորիներ արտադրելիս պետք է ոգտագործվեն խոշոր արտադրող եղեր, վորոնք լինեն 135 սանտիմետրից վոչ պակաս բարձրության։

6. Գյուղատնտեսական աշխատանքների համար լծկան ջորիներ արտադրելիս պետք է ոգտագործել աբորիգեն (բնիկ) ցեղերի և վարդուն ձիերի (ռիսակ) մետիս զամբիկներին։

Այդ տիպի ջորիներ արտադրելու համար կարելի է ոգտագործել վարգունով ազնվացրած ծանրաքաշ ցեղերի արյան խառնուրդ ունեցող զամբիկներին։

Ցանկալի է, վոր մեղավի բարձրությունը լինի 155 սանտիմետրից վոչ պակաս. հատկապես անհրաժեշտ է ընտրել յերկար ու խոր իրանով, կարճ ականջով, յերկար մկանեղ գավակով և վոտքերի ուղիղ դրվածք ունեցող զամբիկներ։

Գյուղատնտեսության համար լծկան ջորիներ արտադրելիս պետք է ոգտագործվեն 125 սանտիմետրից վոչ պակաս բարձրություն ունեցող արտադրող եղեր։

7. Լեռնաբեռնակրային ջորիներ արտադրելու համար պետք է ոգտագործվեն տեղական լեռնային և նրանց տի-

պին մոտ զամբիկները. առավելապես անհրաժեշտ է ընտրել կարճ և ուղիղ մեջքով, ամուր վոտքերով, լավ և ամուր յեղջյուր ունեցող սմբակով։ Ցանկալի յե, վորպեսզի ճնդավի բարձրությունը լինի 135 սանտիմետրից վոչ պակաս։

Լեռնաբեռնակրային ջորիներ արտադրելու համար պետք է ոգտագործվեն 118 սանտիմետրից վոչ պակաս բարձրություն ունեցող, լավ արտակազմ (եքստերյեր) ունեցող տեղական արտադրող եշերը։

3. ԱՐՏԱԴՐՈՂ ԵՇԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

8. Արտադրող եշերի համար առանձնացված ախոռը պետք է լինի չոր, լավ տաքացրած, միջանցուկ քամիներից զերծ և լավ լուսավորված։

Լուսամուտների մակերեսը պետք է ¼ կազմի հատակի մակերեսի $^1/_{12}$-րդական մասից վոչ պակաս։

Ախոռը պետք է մեկուսացված լինի այլ անասունների և թռչունների շենքերից։ Արտադրող եշերի ախոռին կից անպայման պետք է լինի ցանկապատած բակ, նրանց զբոսանքի համար։

9. Արտադրող եշերի ախոռում յուրաքանչյուր արտադրող եշի համար անհրաժեշտ է ունենալ դեննիկ. ախոռի հատակը պետք է լինի կավից, լավ ամրացված և հարթ. դեննիկի չափը պետք է լինի 2,5 ×2,8 մետր և բարձրությունը 2,8—3 մետր։

10. Արտադրող եշերի շենքը պետք է միշտ լինի մաքուր, հաճախակի ողափոխվի, և թաց ցամքարն ու աղբն ամեն որ փոխվի։

11. Արտադրող եշերին պետք է կերակրել անհատորեն հետևյալ մոտավոր չափով.

Կերը	Որվա կերի քանակը կիլոգրամներով	
	Յեվրոպական խոշոր եշերի համար	Համադանի, Մերվի և Բուխարայի եշերի համար
Խտացրած կերեր՝ վարսակ, գարի, յեղիպտացորեն, թեփ և քուսպ	4 – 6	2,5 – 4
Խոտ	6 – 8	6—8

12. Արտադրող եշերին ախոռում պահելու դեպքում, բացի շատ վատ յեղանակներից, անհրաժեշտ է նրանց որական 3—5 ժամ դուրս բերել զբոսանքի։

Բոլոր արտադրող եշերին ամեն որ պետք է մաքրել ձիու խոզանակով, սմբակները լվանալ և չորացնել։

Յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ անգամ պետք է մաքրել և ուղղել արտադրող եշերի սմբակները։ Զուգավորման կամպանիայի ժամանակաշրջանում արտադրող եշերի չորս վոտքերի պայտերը պետք է հանվեն։

13. Արտադրող եշերի ախոռային պահպանման ժամանակ պետք է սահմանել որվա կայուն կարգ ու կանոն. որինակի համար—կարելի յե ղեկավարվել հետևյալով.

Ժամը 5—6-ը ջրել, տալ վարսակ և խոտ (մաքրել դեննիկները),
» 6—8-ը եշերին թեթև մաքրել, ման ածել (կամ բաց թողնել ցանկապատի մեջ),
» 8—10-ը զուգավորում, վորից հետո ման ածել և տալ խոտ,
» 10—11-ը մաքրել եշերին և ախոռը,
» 11—12-ը ջրել, տալ վարսակ և խոտ,
» 17—18 $^1/_2$-ը զուգավորում, վորից հետո ման ածել,
» 18$^1/_2$—19-ը ջրել, տալ վարսակ և խոտ, մաքրել ախոռը,
» 24-ին տալ խոտ (գիշերվա հերթապահի կողմից)։

14. Առողջ, լավ բուծած եշը մի որում կարող է կատարել յերկու ծածկում, 8 ժամ ընդմիջումով։

Յերիտասարդ (մինչև 5 տարեկան) անբավարար բուծածություն ունեցող եշերը մեկ որում պետք է կատարեն միայն մի ծածկում։

15. Արտադրող եշերը 10 որը մեկ անգամ պետք է հանգստանան (չծածկեն)։

16. Արտադրող եշին լավ խնամելիս, զուգավորման սեզոնի ընթացքում նա պետք է ծածկի 30—40 զամբիկ։

4. ՋՈՐԵԱՐՏԱԴՐՈՂ ԶԱՄԲԻԿՆԵՐԻ ՓՈՐՁՈՒՄԸ ՅԵՎ ԶՈՒԳԱՎՈՐՈՒՄԸ

17. Զամբիկի ցանկության գալը վորոշվում է փորձիչի (պրոբնիկի) միջոցով. փորձիչն առանձնացվում է անտեսության բանող հովտակներից. փորձիչ-հովտակը պետք է լինի վոչ շատ ծեր, բավականին աշխուժ, չլինի շատ խիստ և չար։ Հատուկ ուշադրություն պետք է դարձնել փորձիչի առողջության վրա, վորովհետև փորձիչը վարակիչ հիվանդությունով հիվանդ լինելու դեպքում հեշտությամբ կարող է վարակել ջորեմայրերին և արտադրող եշերին։

Զուգավորման կամպանիայի ժամանակաընթացքում պետք է հանել փորձիչների չորս վոտքերի, իսկ ջորեմայրերի միայն հետևի վոտքերի պայտերը։

18. Զորի արտադրող մոր փորձումը կատարվում է կամ ձեռքով (յերբ յերկու ձիապահներ բռնում են փորձիչին յերկու կողմից յերասանակների միջոցով և մոտեցնում են զամբիկները), կամ փակոցի (բարիերի) միջոցով. փակոցի մի կողմը պահում են հովտակին, իսկ մյուս կողմից մոտեցնում են զամբիկը։ Փակոցը լինում է սյուների միջև տեղավորված, ծղոտապատ, մեկ մետր բարձրությամբ և 2,5 մետր յերկարությամբ։ Փորձի սկզբում

փորձիչին թույլ են տալիս հոտոտելու զամբիկի գլուխը յեթե զամբիկը թույլ է տալիս, փորձիչին թույլ են տալիս հոտոտելու զամբիկի աճուկը և հետույքը։ Զամբիկը ցանկություն չունենալու դեպքում թույլ չի տալիս փորձիչին մոտենալ, անհանգիստ է և աքացիում է. իսկ յերբ զամբիկը ցանկություն ունի, թույլ է տալիս փորձիչին մոտենալ։

Բացի այդ, ցանկություն ունեցող զամբիկն ունենում է հետևյալ նշանները. լինում է անհանգիստ, ախորժակը կորցնում է, մերքն ուռչում է, հաճախակի միզում, պոչը բարձրացնում է, մերքը թարթում է և արտաթորում է մուգ դեղնավուն լորձունք։

19. Զուգավորման կամպանիայի սկզբից ամեն որ չծնած զամբիկների ցանկության գալն ստուգվում է փորձիչով։ Նորածին զամբիկները ծնելուց 5 որ հետո նույնպես ամեն որ փորձվում են։

20. Այն ջորեմայրերը, վորոնց ցանկությունը հայտաբերվում է, ծածկվում են ցանկության հաջորդ որը, հետագայում ջորեմայրերը փորձվում են չորրորդ, վեցերորդ, ութերորդ, տասներորդ և տասներկուերորդ որերը՝ հաշված ցանկության որից։ Յեթե ջորեմայրերը ցանկություն են հայտնում և տասներկուերորդ որը, այդ դեպքում նրանք չեն ծածկվում, այլ յենթարկվում են անասնաբուժական քննության։

Ծանոթություն.—20-րդ կետում կատարված փոփոխությունը կատարված է Հայկական Հոգեոդկոմատի Ձիաբուծական վարչության կողմից՝ զուգավորման լրացուցիչ հրահանգի հիման վրա։

21. Յեթե ջորեմոր ցանկությունը կրկնվում է, նա փորձվում է և ծածկվում պարագրաֆ 20-ի ցուցմունքով։

22. Յեթե ջորեմայրերը վերջի ծածկումից 35—40 որ հետո ցանկության չեն գալիս, նրանք կարող են համարվել պայմանական հղի։

5. ՁՈՐԵՄՈՐՆ ԵՇՈՎ ԶՈՒԳԱՎՈՐԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՆ

23. Ջորեմոր զուգավորումն եշով կարող է կապված լինել վորոշ դժվարությունների հետ, հետևյալ պատճառներով.

ա) վորոշ եշերի կողմից զամբիկին ծածկելու ցանկություն չունենալը.

բ) զամբիկի և եշի միջև յեղած մարմնի կազմության և հասակի տարբերությունը։

Այդ դժվարությունները հեշտ է վերացնել. առաջինը՝ եշին նախորոք գրգռել մայր եշով, իսկ յերկրորդը՝ ոգտագործելով հատուկ դազգյահ։

24. Զուգավորման համար անհրաժեշտ է ունենալ հատուկ տեղ. ավելի լավ է ունենալ ծածկված շենք՝ ձիամարզարան (մանեժ), լուսավորված վերևից՝ ցրված լուսով։ Զուգավորման կամ մանեժի տեղը պետք է լինի բավականին առանձնացված. ուժեղ լույսը, աղմուկը և ավելորդ մարդկանց ներկայությունը կարող են խանգարել եշի գրգռվելուն և նա կհրաժարվի ծածկելուց։

25. Զուգավորման վայրի կամ մանեժի հատակը պետք է լինի միանգամայն ուղիղ և ցամքարով ծածկված։

26. Փոքր զամբիկները մեծ եշերով զուգավորելիս (որինակ՝ տեղական լեռնային զամբիկը Համադանի եշով) վոչ մի բան հարմարեցնել պետք չէ, վորովհետև մեծ եշը շատ լավ կարող է բարձրանալ ցածր զամբիկի վրա։

27. Ավելի մեծ զամբիկներն եշով զուգավորելիս անհրաժեշտ է պատրաստել զուգավորման դազգյահ (տես նկարի սխեման)։

28. Զար ջորեմորը զուգավորելիս անհրաժեշտ է հագցնել զուգավորման «շլեյկա»։ Զամբիկին ծածկելիս անհրաժեշտ է նրան կարճ յերասանակով բռնել և գլուխը պահել մի քիչ բարձր. եշի առնանդամը վիրավորվելուց խուսափելու համար զամբիկի պոչի հիմքից մինչև մա-



Ջորեմորն զամբիկին զուգավորելիս


Б
А
40
50
125


А
Б
60
150
300

յին մասի ծայրը (ռեպիցա) փաթաթում են թանզիֆով կամ շորով։

29. Զուգավորման համար պատրաստված զամբիկը նախքան ծածկելը նրա կողքին պահում են ծածկվելու ցանկություն ունեցող մայր եշ (գրգռիչ)։ Նախորոք եշը յերասաններով (յերկար թոկ) մոտեցնում են մայր եշին, թույլ են տալիս հոտոտելու նրա սեռական գործարանները և յերբ նկատում են, որ եշն արդեն գրգռված է և նա պատրաստ է ծածկելու (երեկցիա), մայր եշին հեռացնում են և եշը բաց թողնում զամբիկի վրա։ Եշը զամբիկի վրա բարձրանալիս ձիապանն զգուշությամբ, ձեռքով արագ բռնում—մտցնում է եշի առնանդամը զամբիկի հեշտոցի մեջ։ Այդ մոմենտին զամբիկի պոչը կողք են թեքում։ Զամբիկի զուգավորումն եշով անհրաժեշտ է կատարել հնարավորության սահմաններում հանգիստ։ բոլորովին չպետք է շտապեցնել եշին։ Անհրաժեշտ է խուսափել աճապարանքից, աղմուկից և այլն, որոնք կարող են գրավել եշի ուշադրությունը։

30. Զուգավորման հաջողությունը կայանում է նրանում, որ առաջինը՝ եշը զամբիկի վրա լավ բարձրանա, յերկրորդ՝ սերմնահյութը (սպերման) հեշտոցի մեջ խորը թափվի և անցնի արգանդը։

Ծածկման ժամանակ պետք է հետևել, որպեսզի եշը զամբիկի վրայից չիջնի մինչև առնանդամի թուլանալը։ Շատ եշեր սերմնահյութը արտադրելու մոմենտին նրանց պոչարմատը կծկվում է։ Ծածկումը նորմալ վերջացնելուց հետո եշը թուլանում է և սովորաբար որոշ չափով հեռում է զամբիկի վրա պառկած։ Վոտքերը, յերբեմն և գլուխը կախ են ընկնում։ Այդ դեպքում եշի առնանդամը թուլանում է և այնքան փոքրանում, որ ինքնաբերաբար դուրս է ընկնում մերքից։ Յեթե եշը սովորություն ունի նախքան անդամի լրիվ թուլանալն իջնել զամբիկի

վրայից, նրան պետք է պահել զամբիկի վրա, բռնելով յերկու կողմից նրա արմունկներից։

31. Զամբիկին ծածկելու ժամանակ անհրաժեշտ է այնպես բռնել, որպեսզի նա չշարժվի, հակառակ դեպքում եշի առնանդամը սերմնահյութ արտաթորելիս չի կարող հասնել հեշտոցի խոր մասը և ծածկելուց հետո եշը առնանդամի միջոցով մխոցի պես կարող է հետ քաշել սերմնահյութը և գետին թափել։

32. Յեթե վորևվե պատճառով ծածկումը չի հաջողվում, եշին անհրաժեշտ է 15—20 րոպե ման ածել, վորից հետո վերսկսել ծածկումը։ այս դեպքում եշին կրկին անհրաժեշտ է նախապատրաստել գրգռող մայր եշով։

33. Ծածկումից հետո ջորեմոր հետևի վոտքերն ազատում են կապից և 15—20 րոպե ման ածում, դրանից հետո միայն կարելի յե նրան պահել ախոռում կամ բաց թողնել արոտ։

34. Զուգավորումից հետո եշին անհրաժեշտ է 20—30 րոպե ման ածել, վորից հետո ծղոտի կապուկով (ժգուտով) ուժեղ շփելով չորացնել նրա գավակը, մեջքը և վոտքերը։ Ծածկելու ժամանակ ցուրտ յեղանակներին եշին ծածկում են թամբակալով կամ ծածկոցով։

35. Ջորեբուծական տնտեսություններում զուգավորման կամպանիան անցկացնող անձինք պետք է ուշադրությամբ ուսումնասիրեն յուրաքանչյուր ջորեմոր և արտադրող եշի սովորությունները, հատկապես նրանց վարքը զուգավորման ժամանակ, ցանկության տեվողությունը և այլն։

Յուրաքանչյուր զամբիկի և արտադրողի նկատմամբ պետք է ունենալ անհատական մոտեցում, հաշվի առնելով կենդանիների բնավորությունները և սովորությունները։

36. Եշից բեղմնավորված զամբիկի հղիության տեվողությունն ավելի յերկար է, քան հովտակից բեղմնավորված զամբիկի հղիությունը։

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ եշից բեղմնավորված գամբիկները ավելի շատ են նախատրամադրված վիժման։

Գամբիկները կարող են վիժել՝ ծանր աշխատանքից, հատկապես խիստ կարճատև լարվածություններից, ցեխի մեջ և սայթաքող ճանապարհի վրա աշխատելիս։ Վիժումները շատ հաճախ կարող են տեղի ունենալ հղիության առաջին ամիսներին։ Այդպիսի դեպքերում տեղի ունեցած վիժումը կարելի է չնկատել և վիժած գամբիկին հաշվի առնել որպես ստերջ։ Զորեարտադրության ռացիոնալ կազմակերպումը հիմնականում հանդիսանում է զուգավորված ջորեմայրերի լավ խնամքն ու կերակրումը և թեթև աշխատանքը։

37. Զուգավորման որպես արդյունքները ճիշտ և պարզ գրանցվում են զուգավորման մատյանում։

6. ՄԱՅՐ ԵՇԵՐԻ ՓՈՐՁԵԼԸ ՅԵՎ ԶՈՒԳԱՎՈՐԵԼԸ

38. Եշաբուծության մեջ զուգավորման կամպանիայի ճիշտ անցկացման պարտադիր պայմանն են հանդիսանում արտադրող և մայր եշերի նորմալ բովածության պահպանումը։ Նիհար և շատ հոգնած մայր եշերը հազվագյուտ դեպքերում են ունենում նորմալ ցանկություն և կարող են հղի լինել։

39. Մայր եշերի հղիությունը տևում է միջին հաշվով 12 ամիս. ծննդաբերությունից հետո մայր եշերի ցանկության գալը կարող է ուշանալ մինչև մեկ ամիս և ավելի. այդ կապակցությամբ մայր եշերի զուգավորումը պետք է սկսել ավելի շուտ, քան գամբիկների զուգավորումը (փետրվար, մարտ ամիսներից)։

40. Մայր եշերի ցանկության գալը փորձվում է փորձիչի ոգնությամբ։ Վորպես փորձիչ անհրաժեշտ է առանձնացնել տնտեսության բանող կազմից ամենայուռանգուն եշին։

41. Փորձի ժամանակ արտադրող եշին անհրաժեշտ է մոտեցնել յերասանակներից բռնած կամ թե ցանկապատի մեջ բաց թողած մայր եշին։ Մայր եշերին փորձիչով փորձելիս ցանկության գալու կամ արտադրողից հրաժարվելու ցուցմունքները նույնն են, ինչ որ գամբիկներինը։ Մայր եշերի ցանկության գալու նշանները յուրահատուկ են։ Նրանք հաճախ գլուխն ու ականջները կախում են, բերանը բաց անում, չփչփացնում ու թքոտում, յերբեմն թարթում մերքով (мигают петлей) և միզում են։

42 Ստերջ մայր եշերին պետք է սկսել փորձել ամեն որ՝ զուգավորման սեզոնն սկսվելու հետ միաժամանակ։ Նորածին մայր եշերին անհրաժեշտ է սկսել փորձել ծնելուց հինգ որ հետո և հետագայում՝ ամեն որ շարունակել մինչև ցանկության գալը։

43. Մայր եշերի զուգավորումը կատարվում է նույն որերին, ինչպես ջորեմայրերի զուգավորումը (տես պարագրաֆներ՝ 20, 21, 22)։ Բեղմնավորումը կատարվում է ձեռնաքաշ և աղալային (վարկովայա)։

44. Աղալային զուգավորման ժամանակ փորձիչի ոգնությամբ ստուգված մայր եշին քշում են աղալը և բաց են թողնում նրա մոտ արտադրող եշին։

45. Եշաբուծության մեջ ձեռնաքաշ զուգավորումը կատարվում է այնպես, ինչպես և ջորեարտադրության մեջ (տես 5-րդ հատվածը)։

7. ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

46. Յուրաքանչյուր զուգավորման կայան պետք է լինի անասնաբուժի կամ բուժակի հսկողության ներքո։

47. Նախքան զուգավորման կամպանիան սկսելը, բոլոր կոլտնտեսությունները պետք է կանչեն անասնաբուժական դծով աշխատողին՝ զուգավորման համար առանձնացված արտադրող և մայր եշերին քննելու, հատկապես

ԱՌԳԱՅԻՆ ՀՍՍՍՀ

ուշադրություն դարձնելով «ՁՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԱԽՏ» (պադոեղալ) և ՎԱՐԱԿԻՉ ՎԻԺՈՒՄ (ինֆեկցիոն աբորտ) հիվանդությունների վրա։ Անասնաբուժական քննության յենթարկվում են նաև մենատնտեսների այն մայրերը, որոնք կցված են զուգավորման կայանին. զուգավորման կայանին պետք է ներկայացնեն տվյալ մայր եշի առողջությունը հաստատող սանիտարական քննության տեղեկանքը։

48. Զուգավորմանը մասնակցելու թույլատրվում են միայն առողջ արտադրող ու մայր եշերը։ Խիստ գերհոգնածության հատկանիշներով մայրերին զուգավորելն արգելվում է։ Յուրաքանչյուր զուգավորումից առաջ, ինչպես արտադրող, այնպես էլ մայր եշերը յենթարկվում են անասնաբուժական քննության՝ անասնաբուժի կամ բուժակի կողմից, իսկ նրանց բացակայության ժամանակ՝ զուգավորման կայանի վարիչի կամ սանիտարի կողմից։

49. Յեթե եշի առնանդամի վրա նկատվեն պզուկներ, խոցիկներ կամ ձվապարկի վրա ուռուցք, այդ դեպքում առանց անասնաբուժական պերսոնալի թույլտվության նրան զուգավորման համար ոգտագործելն արգելվում է։

50. Ներքոհիշյալ հիվանդությունների նշաններ ունեցող մորը (նիհարություն, փոս ընկած, թարախակալած աչքեր, ընդհանուր թուլություն, կրծքի ուռուցք ու պրնդացում, արտաքին սեռական գործարանների ուռուցք, սեռական գործարանների վրա պզուկներ, խոցեր, ինչպես արտաքինից, այնպես էլ ներսից, թարախի, կեղտոտ լոր ձունքի և արյունաջրի հոսելը, հետույքի թուլությունմարմնի վորևե մասի կաթված, ուռուցք փորի, կրծքի, վրա, քթածակերից լորձունք հոսելը, ուռուցք ծնոտի տակ, ուռուցք վոտների վրա, քոսը, փոքրիկ շրջագծեր և մերկ բծեր մարմնի վրա) առանց անասնաբուժի թույլտվության չի կարելի վոչ փորձել և վոչ էլ զուգավորել։

51. Յեթե բեղմնակայանի մոտ հայտաբերված է վորևե վարակիչ հիվանդություն, վոր վտանգավոր է արտադրող եշերի և մեացած կենդանիների համար, զուգավորման կայանի աշխատանքներն անմիջապես դադարեցվում են և կարող են վերսկսվել միայն անասնաբուժի թույլտվությամբ։

52. Արտադրող եշի հիվանդանալու դեպքում զուգավորման կայանի վարիչը պարտավոր է անհապաղ այդ մասին հայտնել մոտակա անասնաբուժական կայանին։

ԽՍՀՄ-Ի ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՁԻԱԲՈՒԾԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ԲՈՒՇՈՒՅԵՎ

Թարգմանեց՝ Հ. Լեզգիյան
Խմբագրեց՝ Ավ. Ալլահվերդյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Ալեքյան
Սրբագրիչ՝ Խ. Այվազյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. Ավագյան
Գլավլիտ № 1211
Հրատ. 418, պատվեր 686, տիրաժ 1500
Հանձնված է արտադրության 1937 թ. ոգոստոսի 21-ին
Ստորագրված է տպագրության 1937 թ. սեպտ. 17-ին

Պետհրատի 2-րդ տպարան, Նալբանդյան, 11

30

ՀՀ Ազգային գրադարան
NL0937830

452

ԳԻՆԸ 30 Կ.

29 СЕН 1937

11
28577

НКЗ АРМ. ССР

Коневодческое управление

ИНСТРУКЦИЯ

по проведению случной кампании
в мулопроизводстве и ословодстве

Госиздат, Ереван, 1937 г.